

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**  
**ԿՈՆԴԱԿԸ ՌԱՖԱՅՅԵԼ ՊԱՊԱՅՅԵԱՆԻՆ**  
**«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»**  
**ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱԿԱՏԱՆԱՅ**  
**ԱՌ ՍԻՐԵՅՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ**  
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ**  
**ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՌԱՖԱՅՅԵԼ ՊԱՊԱՅՅԵԱՆ,**  
**ՈՐ ՅԵՐԵՒԱՆ**

Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի գոհունակութեամբ Նայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ՝ եկեղեցանուէր Ձեր երկարամեայ եւ արգասատր գործունեութեան համար:

Յարգարժան պրն Պապայեան,

Անցնող րասնամեակների ընթացքին հաւարատր ու հայրենասէր ոգով Դուք Ձեր փորձառութիւնն ու ամբարած գիտելիքներն անմնացորդ ծառայեցրեցիք հոգևոր արժէքների հաստատմանն ազգային մեր կեանքում՝ միջնակարգ դպրոցի ուսուցչից եւ բարձրագոյն ուսումնական հաստատութեանց դասախօսից մինչեւ պետական պարասխանաբար բարձր պաշտօններում Ձեզ առաջնորդ ունենալով ծնողներից ժառանգած մեծ ու անկեղծ սէրը հարազատ ժողովրդի, Նայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ:

Նախախնամութեան կամքով Նայրենի մեր երկրի անկախութիւնից յետոյ Դուք երկիցս ընկրուեցիք Ազգային ժողովի պարզամատր, այնուհետեւ նշանակուեցիք Սահմանադրական դարարանի անդամ եւ այսօր մեր լուսատար գալիքի տեսիլքով շարունակում էք նուիրումով ու նախանձախնդրութեամբ ծառայել մեր երկրում օրէնքի պահպանութեան եւ օրինայարգ հաստատութեան ձեւատրման կարեւոր գործին:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն բերած Ձեր ծառայութիւնը նոյնպէս արդիւանատր է բազում բարի պտուղներով: Վազգէն Ա. Ամենայն Նայոց բարեյիշարակ Նայրապետը, բարձր գնահատելով որդիական Ձեր նուիրումն ու ծառայասիրական պարաստակամութիւնը հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, իմաստուն որոշմամբ հրապիրեց Ձեզ անդամակցելու Մայր Աթոռիս Գերագոյն Նոգետր Խորհրդին, որի կազմում ահա աւելի քան րասը րարիներ Դուք եռանդաշար ծառայութիւն էք բերում ազգային-եկեղեցական մեր կեանքին՝ Նայ Եկեղեցին ներկայացնելով միջեկեղեցական գիտաժողովներում եւ աշխուժօրէն մասնակցելով եկեղեցական յանձնախմբերի աշխարանքներին: Մեր Նայրապետութեան շրջանին Մենք եւս վկայ դարձանք Ձեր հաւա-

փառոր ոգուն ու անձնուէր գործին եւ գոհունակ սրբով փառք ենք բարձրացնում առ Աստուծո՛ւմ, որ մեր Եկեղեցուն պարգեւում է Ձեզ պէս նուիրեալ ու ծառայասէր զաւակներ:

Առանձնակի գոհունակութիւն է Նայոց Նայրապետիս համար, որ Դուք պնդական պաշտօնաւարութեանն ու մեր Սուրբ Եկեղեցուն բերած ծառայութեանը զուգընթաց զբաղուում էք նաեւ զհիւրական գործունէութեամբ: Այսօր Ձեր անդով ու ակնոյնաբեկ աշխատանքով սեղանի վրա են մի քանի տասնեակ աշխատութիւններ, որոնք վերաբերում են քրիստոնէութեան, իրաւունքի, պետութեան եւ Եկեղեցու հարաբերութիւնների հիմնահարցերին: Այս առումով ցանկանում ենք առանձնացնել Ձեր հեղինակած «Արդի իրաւունքի քրիստոնէական ակունքները» աշխատութիւնը, որը վերջերս հրատարակուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանաւորութեամբ եւ գնահատանքով ընդունուեց ինչպէս հոգեւորականների, այնպէս եւ հայ մտաւորականութեան եւ իրաւունքի մասնագէտների կողմից:

Մեծարգոյ պրն Պապայեան,

Ձեր ծառայութիւնները եւ վաստակը բարձրօրէն արժեւորելով Նայրապետական այսու Սրբափառ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## Ս Ո Ւ Ր Բ Ն Ե Ր Ս Է Ս Շ Ն Ո Ր Ն Ա Լ Ի

պարտոյ բարձր շքանշանը:

Լիայոյս ենք, որ շնորհեալ պարգեւը Ձեզ համար պիտի լինի նոր խրախոյս՝ առաւել զօրացած ու խանդավառ Ձեր ծառայութիւնը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Այս ուրախ առիթով Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հասապագ զօրավիզ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջատոջ երկար կեանք եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

*Ողջ լեղութիւն ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգայն եւ յաւէր օրինեալ ի Մէնջ ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Օգոստոսի  
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ  
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 180